

ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Ետը. տես յէջ 72)

Պ Բ Ա Կ Գ

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ ԱՍՏԻՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԿԱՆ

ԳԼ. Է. Ծաղրելին

ՄԵՄԻՆ ներհան է ծաղրելի որ քե-
ղեցկայիտական զգացմանց կը պատկանի ա-
նով որ ան ալ անշահախնդիր յուզում մը
կը յարուցանէ մեր մէջ։ Արդէն իսկ Արիւ-
տտեղ զիտեղ կու տայ ծաղրելին՝ որ կը ծնի
մաքի զոյգն թերութիւններէն կամ մուլ-
թիւններէն և արտաքին փոքր պակասութիւն-
ներէն։ այսինքն ոչ ատելութիւն, ոչ արհա-
մարհանք, ոչ զուլթ կ'ազդէ մեզ։ Դարձեալ
ինչպէս վսեմն ու գեղեցիկն՝ ծաղրելին ալ
մարդուս միայն կը պատկանի, որով կը հե-
տեցնենք թէ ան ալ իր ծագումը կ'առնու
մարդը կենդանիներէ որոշող ազատութեան
սկզբունքէն։

Եթէ մինչեւ հիմա մեր հետեւած հետա-
զոտութեան ոճն շարունակելով բնութեան
մէջէն սկսինք, կը տեսնենք որ բնութեան ե-
րեք թաղաւորութեան մէջ ալ և ոչ իսկ մէկ
ծաղուս առարկայ կը գտնուի։ Առ առաւելն
կենդանական թաղաւորութեան ամենէն մար-
դակերպ անասուններուն մէջ կրնանք պատա-
հել անոր, և դուն ուրիշ չորքոտանիներուն մէջ
ուր աւելի զիպուածով կրնան պատահիլ ծա-
ղրական բաներ։ Ամենէն աւելի կ'ապիկն է որ
այս մասին մեզ կը խնդացնէ, որովհետեւ
բնագոյով զայն կը բաղդատենք մարդուն հետ,
և այս բաղդատութենէն ծագած անհիմն-
թութիւնը մեր ծաղրը կը շարժէ։ Գաղղիացի
աստղաբաշխներ ուսումնական դիտողութեանց
համար Ամերիկա գացած ըլլալով հազիւ

իրենց գործիքներէն կը հեռանային՝ անմի-
ջապէս բանի մը կ'ապիկ ծառերէն վար իջնե-
լով զիտակներուն առջեւ կ'անցնէին ամենայն
լըջութեամբ իբրեւ թէ դիտողութիւնները շա-
րունակելու։ Ասոնց այս գործին և ուսում-
նական զաղարարին մէջ եղած հակադրու-
թիւնը ծագու առիթ մըն է, այն է կ'ապի-
կին դաւեշտական մարդամասնութիւնը և լուրջ
գործի մը խեղկատակ հետեւողութիւնը։ Այս
օրինակին մէջ արդէն այս երեւոյթին երկու
տարբեր աստիճանները կը տեսնենք, առա-
ջինը պարզապէս անհիմն ընդհանրացում-
թիւն մըն է ինչպէս զոր օրինակ կ'ապիկին
զէմբին ծամածուլութիւնները։ Երկրորդն
այս աստիճանը կ'ազդէ մասնաւոր աւելի
միտմիտ անձեկուն կամ մանուկներուն վրայ։
Երկրորդ աստիճան մըն ալ կայ որ դարձեալ
անհիմն ընդհանրացում ընդհանրացում
և ըրածին մէջ, այդ անհամամասնութիւնը
աւելի մոքի ըմբոսելի ըլլալով՝ աւելի նուրբ
և կիրթ մտքերու կ'ազդէ։

Չոր օրինակ, որ և է լուրջ մարդու մը
սաստով հրաման տուած ժամանակ, կեղծա-
մը վար ինչալով լերկ գլուխը երեսն ելլե-
լը՝ ամենուս ծաղրը կը շարժէ, բայց ենթա-
դրենք որ Որատեանց հայրն ըլլայ որ մե-
ծաստտ «թող մեռնէր»ը արտասանելու
ժամանակ կեղծամը վար գլուխը, այսպիսի
հակադրութեան մը ամբողջութիւնն զգալու
համար տարակոյտ չկայ որ հարկ է գտնա-
լան պատմական ծանօթութիւններ ունենալ։

Երբեմն ծաղրելին անկեղծաբան առարկայից
հակադրութենէն ալ կը ծագի, եթէ պահ մը
իրականին հետ շփոթենք զանոնք։ Չօկայթ
նկարած է շրջուն զերասանաց խումբ մը,
որոց մին իր գուպան շորցնելու համար
կախած է թատրոնի մէկ ամպէն։ Հոս ծագու
տպաւորութիւնն մը կը ծագի պահ մը այդ
ամպերի իբրեւ ճշմարիտ ամպ նկատելի։ Այժ-
մ փոփելով մեր խօսքը կրնանք ըսել թէ ծա-
ղրելին կը ծագի անկէ որ, 1⁰. Անձ մը իր
արտաքին տեսքով կամ իր նկարագրով
անհամամասնութիւն մը ունի իր ընկերական
զիրքին կամ իր դասուն կանոնաւոր տիպա-
րէն հետ։ 2⁰. Այն անձին իրական վիճակին
և գործերուն, իւր նպատակին և գործադրած

միջոցներուն, իրօք եղածին և ըլլալ կարծուածին մէջ անհամեմատութիւն մը կը գտնուի:

Դիտելի է որ ծաղրելին գոյանալու համար պէտք է որ անձն այս անհամեմատութեանց անգիտակից ըլլայ և տեսնողը զանոնք նշմարէ և անոով զգածուի, մէկ խօսքով մենք ճշմարտին մէջ ըլլալու ենք, մինչդեռ նշանակեալ անձն խաղալիկ եղած ցնորքներու մէջ թարթափի: Ասով այնչափ ծիծաղաշարժ կ'ըլլայ ահաբեկեալ Սանջոն որ գիշերն ի բուն անկախ կը մնայ փոքր փոսի մը եզերքը, կարծելով որ աշխատակ խորխորատ մը ունի իր ոտքերուն տակը: Այս զգացումը կ'աւելնայ մեր գիտնալովքը թէ ինչ վատասիրտ և ինքնապաշտ է այդ անձը:

Ծաղրելոյն գեղեցիկն է վսեմէն ունեցած էական տարբերութեանց մին սա իսկ է որ երբեք գեղեցիկն և վսեմը կեղծին կամ չարին մէջ չեն կրնար գտնուիլ, մինչդեռ ծաղրելին՝ բարին և չարը, ստոյգ ու ուսու, գեղեցիկն ու սղեղին պահ մ' իրարու հետ շփոթելէն կը ծագի:

Ծաղրելին գեղեցիկ դեր մը ունի մեր կեանքին մէջ քաղցրացնելով զայն կամ մեղմացնելով մեր միշտերը: Նուրբ ծաղրածութիւնն յաճախ աւելի կը յաջողի մեր թերութիւններն ուղղելու քան իմաստասիրական պատճառաբանութիւններ: Մօլիերի մէկ կատակերգութիւնն՝ բազմահատոր խրատներէ աւելի տպաւորութիւն գործած է միշտ: Ահաւասիկ քանի մը օրինակներ որոնց մէջ ծաղրելոյն գանազան տեսակները կը գտնուին:

— Ծիրանաւոր մը մերձ ի մահ հասեր էր կոկորդին մէջ պայտի մը պատճառով որ չէր պայթեր: Խուրբանչիւր օք ենթադրելով թէ բժշկուելիք չունի, յարմար գտածին ձեռք կ'երկնցներ: Կապիկ մըն ալ կողպուածէն բաժին մը հանել ուղղելով՝ անոր կարմիր գտակն առաւ պոխն անցուց և ծիրանաւորին առջեւ ելաւ: Այնպիսի բերքի մը բռնեց քաշանայն որ պայտը պայթեց, ցաւ և ստողութիւնը գտաւ:

— Կը պնդեն որ՝ կ'ընէ Արլըքն՝ գաւթի մը գինին ուժ կու տայ. չեմ հասկնար միայն

սուն գաւթի խմեցի և ոտքի վրայ կենալու կարողութիւն չունիմ:

— Վաշխառու մը քարոզիչէ մը կը խնդրէր որ ուժգին կերպով քարոզ մը տայ վաշխառուաց զէմ: Քարոզիչն որ մարդը կը ճանչնար, կը զարմանայ այս խնդրոյն վրայ: «Հայր սուրբ, պատասխանեց միւսը, վաշխառուներն այնչափ շատ են հոս որ ինծի գործ չմնաց. եթէ քիչ մը թիւերնին պակսեցնես, ամէն մարդ ինծի կու գայ:

— Ժ. Պ. Ռուսոյ «Տաղ առ ապագայ սերունդ» անուն քերթուած մը արտասանեց Վոլթերին և անոր կարծիքն հարցուց, — «Երբեք, սիրելի բարեկամ, պատասխանեց Վոլթերը, կարծեմ թէ այդ ծրարը իր հասցէին պիտի չհամոզուի»:

— Անգլիկացի տիկնոջ մը ողջախոհութիւնն այն աստիճան բժախնայիւր էր որ իր մատենադարանին մէջ այր և կին հեղինակները մի և նոյն պարակնի վրայ չէր շարեր:

Շարայարեղի



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1. Ազգագրական Հանդէս պատկերազարդ. չորրորդ տարի Ե. գիրք 1899 թիւ 1, Թիֆլիս. տպ. Կ. Մարտիրոսեանցի:

Պր. Երուսեմ Լալայեան հրատարակած է այս գիրքը. որոյ առաջին յօդուածն իրիմեան վեհէ. Հայրիկին կոնգակն է, որով կը պրտատէ նոյն Հանգիսեմ ժրաշին խմբագրատը, և կը յորդորէ իւր հօտը՝ որ «մանք» նիթապէս, այլը՝ բարոյապէս օգնեն Պր. Ե. Լալայեանի՝ ազգագրական, հնախօսական և տեղագրական յօդուածներով:

Այս հրուէրը կարծեմ կարգացուած չէ Հայրենիքէն տարածութեալ Հայութեան, այլ՝ վանահարց քահանայից և աշխարհիկ անձանց որք Հայրենեաց մէջ կ'աղբիւր և անտարակոյս վեհէ. Հայրիկին ձայնը քաղցր պիտի հնչէ այն ամենուն՝ որոնք ազգային պատմութեան և աշխարհագրութեան մօտ